**Վանո Եղիազարյան**

# ԳԱԳԻԿ Բ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ ԵՎ ՆՐԱ «ՀԱՎԱՏՈՅ ԳԻՐ»-Ը

***Բանալի բառեր՝*** *Անիի Բագրատունյաց թագավորություն, հայոց արքա, հավատի գիր, հայոց եկեղեցու դավանանք, դավանաբանական արժեք*

Հայագիտության մեջ հայոց թագավոր և մատենագիր Գագիկ Բ Բագրատունուն անդրադարձել են Մ. Չամչյանցը[1], Գ. Զարբհանալյանը[2], Ղ. Ալիշանը[3], Լեոն[4], Մ. Օրմանյանը[5], Մ. Աբեղյանը[6], Հ. Աճառյանը[7], Գ. Մանուկյանը[8], Հ. Բարթիկյանը[9], Ս. Պողոսյանը[10], Մ. Գրիգորյանը[11], Լ. Խաչերյանը[12], Գ. Մուրադյանը[13], Հ. Քյոսեյանը[14], Կ. Մաթևոսյանը[15] և այլք:

Հայ մատենագիրներից Գագիկ Բագրատունուն հիշատակել են Արիստակես

---

[1] Տե՛ս **Մ. Չամչյանց**, Հայոց պատմություն, Ե., 1984, էջ 919-1039:

[2] Տե՛ս **Գ. Զարբհանալեան**, Հայկական հին դպրութեան պատմութիւն, Վենետիկ, 1897, էջ 91, 777-778:

[3] Տե՛ս **Ղ. Ալիշան**, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 343:

[4] Տե՛ս **Լեո**, Երկերի ժողովածու տասը հատորով, հտ. երկրորդ, Երևան, 1967, էջ 670, 671, 673, 680:

[5] Տե՛ս **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, Էջմիածին, 2001, էջ 1424, 1429-1436, 1438-1439, 1453-1455, 1460, 1467, 1469, 1471, 1476, 1482-1487, 1505, 1511-1513, 1518-1521, 1539-1540, 1568-1569:

[6] Տե՛ս **Մ. Աբեղյան**, Երկեր, հտ. Դ, Երևան, 1970, էջ 34, 35, 36, 41, 42, 63, 114, 158:

[7] Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա, Երևան, 1942, էջ 433-435:

[8] Տե՛ս **Արիստակես Լաստիվերցի**, Պատմություն, թարգմանությունը **Վ. Ա. Գևորգյանի**, Երևան, 1971, էջ 128-131:

[9] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հտ. III, Երևան, 1976, էջ 151-154, նաև Բյուզանդական աղբյուրներ, Գ, **Հովհաննես Սկիլիցես**, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ **Հրաչ Բարթիկյանի**, Երևան, 1979, էջ XLII-XLIII, 352-353:

[10] Տե՛ս **Հ. Ժամկոչյան, Ա. Աբրահամյան, Ս. Մելիք-Բախշյան, Ս. Պողոսյան**, Հայ ժողովրդի պատմություն սկզբից մինչև VXIII դարի վերջը, Երևան, 1975, էջ 458-460, 508, 510:

[11] Տե՛ս **Մ. Գրիգորյան**, Գագիկ Արծրունի և Գագիկ Բագրատունի թագավորների թղթերը բյուզանդական արքունիքին, տե՛ս Պատմա-բանասիրական հանդես, 1989, թիվ 3, էջ 94-101:

[12] Տե՛ս **Լ. Խաչերեան**, Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս. Կեանքն ու գործունեութիւնը, Լոս Անճելըս, 1987, էջ 109-132:

[13] Տե՛ս **Գ. Մուրադեան**, Գրիգոր Մագիստրոս, տե՛ս Մատենագիրք Հայոց, հտ. ԺԶ, Երեւան, 2012, էջ 95-97:

[14] Տե՛ս **Յ. Քէոսէեան**, Գագիկ Բագրատունու Հաւատոյ գիրը, տե՛ս Մատենագիրք Հայոց, հտ. ԺԶ, Ե., 2012, էջ 663-664:

[15] Տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Երևան, 2015, էջ 58-74:

Լաստիվերցին (ԺԱ. դար), Գրիգոր Մագիստրոսը (ԺԱ. դար), Մատթեոս Ուռհայեցին (ԺԱ.-ԺԲ. դարեր), Սամվել Անեցին[16] (ԺԲ. դար), Ներսես Լամբրոնացին[17] (ԺԲ. դար), Կիրակոս Գանձակեցին[18] (ԺԳ. դար), Վարդան Արևելցին[19] (ԺԳ. դար), Սմբատ Սպարապետը[20] (ԺԳ. դար), Մխիթար Այրիվանեցին[21] (ԺԳ. դար), Ստեփանոս Օրբելյանը[22] (ԺԳ.-ԺԴ. դարեր) և այլք:

Գագիկի մասին հիշատակություն են թողել նաև բյուզանդական պատմիչներ Հովհաննես Սկիլիցեսը[23] և Միքայել Ատտալիատեսը[24]:

Սույն հոդվածի **նպատակն** է ամբողջացնել Գագիկ Բագրատունի թագավորի գրական դիմապատկերը, որն էլ հոդվածի **արդիականությունն է**: Մեր **խնդիրն** է մասնագիտորեն գնահատել Գագիկ Բագրատունու դերը հայ միջնադարյան գրականության պատմության մեջ՝ արդի հայագիտության լույսի ներքո: Հոդվածում կիրառել ենք **կենսագրական, կուլտուր-պատմական և պատմական** մեթոդները: **Գիտական նորույթը** Գագիկ Բագրատունու գրական դիմապատկերի ամբողջական ներկայացումն է:

Միջնադարի բանաստեղծներ Ստեփանոս Օրբելյանն իր «Ողբ»-ում[25], իսկ Վահրամ Ռաբունին՝ Վահրամ Վարդապետ Սկևռացին (ԺԳ. դար),

---

[16] Տե՛ս **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ **Կարեն Մաթեւոսյանի**, Երեւան, 2014, էջ 185-187, 191, 192, 195, 196, 201, 216, 228, 395, 403:

[17] Տե՛ս Սրբոյն Ներսեսի Լամբրոնացւոյ Տարսոնի եպիսկոպոսի Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ և Մեկնութիւն խորհրդոյ պատարագին, Վենետիկ, 1847, էջ 535:

[18] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները **Վարագ Առաքելյանի**, Երևան, 1982, էջ 75-82:

[19] Տե՛ս Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի**, Վենետիկ, 1862, էջ 99, 105, 115:

[20] Տե՛ս **Սմբատայ Սպարապետի**՝ եղբոր Հեթմոյ Առաջնոյ արքայի Հայոց Պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպօլիս եւ Հայոց մեծաց ըստ կարգի ժամանակաց, Մոսկուա, 1856, էջ 54, 57-58, 61-63, 75, 78-82, 86-87, 88, 90, 91, 135:

[21] Տե՛ս **Մխիթար Այրիվանեցի**, Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 19, 73:

[22] Տե՛ս **Ստեփանոս Օրբելյան**, Սյունիքի պատմությունը, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները **Ա. Ա. Աբրահամյանի,** Երևան, 1986, էջ 232, նաև Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, հրատ. պատրաստեց **Աշ. Աբրահամյանը**, Երևան, 1942, էջ 13, 19:

[23] Տե՛ս Բյուզանդական աղբյուրներ, Գ, **Հովհաննես Սկիլիցես**, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ **Հրաչ Բարթիկյանի**, Երևան, 1979, էջ 147-148:

[24] Տե՛ս Բյուզանդական աղբյուրներ, Զ, **Միքայել Ատտալիատես**, Պատմություն, թարգմ. բնագրից, ծանոթագր.՝ **Հ. Մ. Բարթիկյանի**, Երևան, 2014, 326 էջ:

[25] Տե՛ս **Ստեփաննոս Օրպէլեանի** Ողբ ի Ս. Կաթուղիկէն, բնագիրը յառաջաբանով և ծանոթութիւններով հրատարակեց **Կարապետ Կոստանեանց**, Թիֆլիս, 1885, էջ 34, 61:

Ռուբինյանների մասին չափածո պատմության մեջ[26] Գագիկ Բ թագավորին հիշատակել են իրենց չափածո երկերում:

*Նա և Հայոց՝ արքայն օծեալ,*
*Այն որ Գագիկն՝ է կոչեցեալ.*
*Յայնքան չարիսն՝ նայեցեալ,*
*Եւ զհանդերձեալն՝ նկատեալ[27]:*

Ուշ միջնադարում Գագիկ թագավորին հիշատակել է նաև Մինաս Ամդեցին[28] (ԺԷ. դար), իսկ այս ողբերգական արքայի մասին ԺԸ. դարում Կարապետ Տեր-Մինասյանը գրել է մի թատերգություն՝ «Գագիկ վերջին արքայ հայոց Բագրատունի» վերնագրով[29]:

**Գագիկ Բ Բագրատունու ժամանակակից Գրիգոր Մագիստրոսն** իր Թղթերում հիշատակում է Գագիկին. նրա Գ թղթի վերնագիրն է «Պատասխանի կաթողիկոսին յաղագս Գագկայ, որ ասէր թէ խորհին կորուսանել զքեզ», որում հիշատակված Գագիկը հենց Գագիկ Բ Բագրատունին է, ում անունը վկայված է նաև ԻԲ թղթում, որի վերնագրից պարզվում է՝ Գագիկը նամակ է գրել Սարգիս Սևանցուն, որ վերջինս գա իր մոտ, և «ի միասին գրոց պարապեսցուք»[30]: Ինչպես Մ. Աբեղյանն է նկատել, այս «Գագիկ Բ-ն է շատ երիտասարդ և գահազուրկ ժամանակ, քանի որ Մագիստրոսն իր նամակի մեջ նրան «մանուկ» է անվանում»[31]: Մ. Աբեղյանի այս կարծիքն ընդունելի է մասնակի, քանի որ «մանուկ» նշանակում է նաև «կտրիճ, քաջ», և չենք կարող բացառել, որ Մագիստրոսն այդ իմաստով է գործածել թագավորի մասին ասված «մանուկ» բառը, թեև մեզ համար ևս ընդունելի է Կ. Մաթևոսյանի կարծիքը. «Քանի որ Սարգիսն իր մտերիմն էր, իշխանը նրա հետ շատ անկեղծ է ու թագավորի տարիքը նկատի ունենալով՝ նրան հաճախ մանուկ է կոչում, մեղադրում բանսարկուներին լսելու և այլ մեղքերի մեջ»[32]:

---

[26] Տե՛ս **Վահրամայ Ռաբունւոյ** ոտանաւոր Պատմութիւն Ռուբենեանց, Փարիզ, 1859, էջ 190-194:

[27] Անդ, էջ 190:

[28] Տե՛ս **Մինաս վարդապետի Համդեցւոյ**, Ազգաբանութիւն Հայոց, Վաղարշապատ, 1870, էջ 34-36, 38, 118-119:

[29] Տե՛ս **Կ. Տէր-Մինասեան**, Գագիկ վերջին արքայ հայոց Բագրատունի, յԵրուսաղէմ, 1872, 192 էջ:

[30] **Գրիգոր Մագիստրոսի** թղթերը, բնագիրն յառաջաբանով եւ ծանօթագրութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց **Կ. Կոստանեանց**, Աղէքսանդրապոլ, 1910, էջ 66:

[31] **Մ. Աբեղյան**, Երկեր, հտ. Դ, էջ 41:

[32] **Կ. Մաթևոսյան**, Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, էջ 62:

Մագիստրոսի նամակներում Գագիկ Բ թագավորի հետ կապված խնդիրների մասին Գ. Մուրադյանը գրում է. «Մի քանի նամակում արծարծուում են Գագիկ Բ արքայի հետ հեղինակի բարդ յարաբերութիւնները՝ «Առ որդին Աշոտի պատասխանի, մինչ զհաւրէն իւր գրէր բանս կեղերջականս» (Մագ. 8 (ՀԲ)), «Պատասխանի կաթողիկոսին յաղագս Գագկայ, որ ասէր թէ խորհին կորուսանել զքեզ» (Մագ. 19 (Գ)), «Պատասխանի տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի սակս տնտնջելոյ զորդւոյն Աշոտի, մինչ կինն վաղճանեցաւ» (Մագ. 20 (Դ)), «Պատասխանի թղթոյն Գագկայ որդւոյն Աշոտոյ, եկեալ վասն ոչինչ իրաց վայրապար զկնի կրաւնաւորաց սակս պարտուց ինչ նոցա ի գաւառէն Տարաւնոյ» (Մագ. 55 (ՀԳ)): Մի նամակում անդրադարձ կա Գագիկի առողջական խնդիրներին (Մագ. 61 (ԻԲ))»[33]:

Մ. Աբեղյանը նկատել է, որ Գրիգոր Մագիստրոսի և Գագիկ Բագրատունի թագավորի միջև գժտություն է եղել. «Գրիգոր Մագիստրոսը մյուս Պահլավունիների հետ պաշտպան է կանգնում Անիի թագավորության և Գագիկ Բ-ի գահակալության: Նա իր զորքերով օգնում է Գագիկին ճակատ մղելու թուրքերի դեմ և ջարդելու նրանց 1042-1043 թթ., բայց շուտով գժտություն է ընկնում այդ երկուսի միջև, և նա հալածվում է թագավորից, ինչպես ինքը գրում է, կրելով բանտ, կապանք ու զրկանքներ և մինչև անգամ մահվան սպառնալիքներ (Թուղթ ԿԱ, էջ 139 և հտն.): Հետո թագավորը զղջալով կամենում է հաշտվել նրա հետ, բայց հավանորեն գլուխ չի գալիս հաշտությունը և Գրիգորը հեռանում է Տարոն»[34]:

«Առ որդին Աշոտի պատասխանի, մինչ զհաւրէն իւր գրէր բանս կեղերջականս» վերնագրով ՀԲ թղթում Մագիստրոսը գանգատվում է թագավորի անհիմն մեղադրանքից. «Այլ դու եթէ ի մէնջ զաւգնութիւն խնդրեցեր, ո՞ր էր, որ աւգնէր, ո՞ արար տեղեակ զիս: Զիա՞րդ ճանաչես զիս՝ հալածելոցն հաւաքի՞չ կամ խռովութեան շիջուցի՞չ, եթէ ընդ խազմարարս խռովիչ, ասա՛ առաջի Տեառն»[35]:

Կ. Մաթևոսյանը նկատում է, որ Գագիկ թագավորի և Գրիգոր Մագիստրոսի հաշտեցման համար միջնորդ է եղել Սարգիս Անեցին. «Գագիկն ընդհարվում է Գրիգոր Բջնեցու հետ, որի մասին թեև պատմիչների մոտ տեղեկություններ չկան, սակայն այդ փաստն ակներև է դառնում Գրիգորի՝ հավանորեն 1042-1043 թթ. գրված մի քանի նամակներից: Այդ իմաստով հատկանշական են հատկապես իշխանի՝ իր բարեկամ Սարգիս Անեցի վարդապետին գրած

[33] **Գ. Մուրադեան**, Գրիգոր Մագիստրոս, տե՛ս Մատենագիրք Հայոց, հտ. ԺԶ, Երեւան, 2012, էջ 96:

[34] **Մ. Աբեղյան**, Երկեր, հտ. Դ, էջ 35:

[35] Մատենագիրք Հայոց, հտ. ԺԶ, էջ 213:

նամակները, որը կաթողիկոսարանի մատենադարանապետն էր և անգամ միջնորդ է դարձել Գագիկ Բ-ի ու Գրիգորի հաշտեցման համար»[36]:

Կարծիք կա, որ այդ հաշտությունը չի կայացել, սակայն Գագիկի համար օրհասական պահին Գրիգոր Մագիստրոսը կանգնել է նրա կողքին՝ փորձելով փրկել կործանվող Բագրատունյաց թագավորությունը. «Ստույգ հայտնի չէ, թե երբ և ինչպես է հանգուցալուծվել այս գժտությունը, սակայն 1044 թ. վերջերին, երբ արտաքին ճնշումներից, Բյուզանդիայի դրդմամբ Դվինի ամիրայի հարձակումներից ընկճված ու անելանելի վիճակի մեջ հայտնված Գագիկին առաջարկվում է մեկնել կայսեր մոտ՝ Կոստանդնուպոլիս, դատելով անուղղակի վկայություններից, Գրիգոր Բջնեցին Անիում էր»[37], քանի որ Գագիկի վերադառնալն արգելելու լուրն առնելուն պես կայսեր մոտ բարեխոս են ուղարկում Գրիգոր Բջնեցուն:

Ինչպես պարզվում է 1045 թ.-ից հետո գրված ՀԳ թղթից, «շատ հետաքրքրական նամակից երևում է, որ Գագիկ Բ-ի և Գրիգոր Մագիստրոսի թշնամությունը դեռ շարունակվում էր»[38]: Ահա թե ինչ է գրում Գրիգորն արքային. «Զի՞նչ այսոքիկ քեզ տռփելի կամ ընձալի: Կամի՞ս զի յաղթեսցեն ինձ, եւ ո՞չ պատկառելի է քեզ այն: Քաջ գիտեմ, եթէ յոյժ: Ապա եթէ ես կամեցայց, ո՞չ է ինձ մեղս, եթէ հարստահարեցից: Այո՛, մեղս համարիմ: Սակայն եթէ ոչ մեղս այսոքիկ, աղէ՛ արձակեա զմեզ ի ձեռն գրոյ»[39]: Նույն թղթում Մագիստրոսը նաև բացահայտում է երկարատև գժտության փաստը. «Ո՞չ գիտես, զի համբերեցի այսքան ժամանակ»[40], ապա ներողամտաբար ավարտում թուղթը. «Եւ ես ներեմ եւ աղաչեմ, որ ձեզ կեանք տայ եւ բարի միտս»[41], և սա այն դեպքում, երբ Գրիգոր Մագիստրոսն արդեն Տարոնի, Մանազկերտի, Արճեշի, Բերկրիի, Միջագետքի տերն էր՝ Մոնոմախ կայսեր կողմից Մագիստրոսի պատվի արժանացած:

**Գագիկ Բ թագավորի և Գրիգոր Մագիստրոսի հարաբերությունները բավականին բարդ են եղել. երիտասարդ թագավորի գլխին թագ դնող Գրիգոր Բջնեցու հանդեպ կարճ ժամանակ անց թագավորը թշնամացել է, և նրանց գժտությունը, ինչպես պարզվում է, շատ տևական ընթացք է ունեցել, անգամ արտահայտվել Բագրատունյաց թագավորության անկումից՝ 1045 թ.-ից հետո:**

---

[36] **Կ. Մաթևոսյան**, Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, էջ 61:

[37] **Կ. Մաթևոսյան**, Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, էջ 62:

[38] Անդ, էջ 68:

[39] Մատենագիրք Հայոց, հտ. ԺԶ, էջ 336:

[40] Անդ:

[41] Անդ, էջ 337:

Ժամանակակից պատմագիրներից Գագիկ Բ Բագրատունու մասին մեզ հասած հիմնական արժանահավատ տեղեկությունները հաղորդել են **Արիստակես Լաստիվերցին** և առավել մանրամասնորեն **Մատթեոս Ուռհայեցին**:

Գագիկ Ա-ի (990-1020) մահից հետո թագավորությունը ժառանգում է ավագ որդին՝ Հովհաննես-Սմբատը (1020-1041): Վերջինիս կրտսեր եղբայրն է Աշոտ Դ Քաջը (990-1040), որը փորձում է տիրել թագավորությանը, սակայն Պետրոս Գետադարձ կաթողիկոսի միջնորդությամբ տեղի է ունենում հաշտություն, համաձայն որի՝ թագավորի մահից հետո իշխանությունն անցնելու է Աշոտ Դ-ին կամ վերջինիս որդուն՝ Գագիկ Բ-ին: 1040 թ. մահացավ Աշոտ Դ-ն, որի որդի Գագիկը ընդամենը 15 տարեկան պատանի էր. «Այդ տարին վախճանվեց հայոց թագավոր Աշոտ Բագրատունին՝ Գագիկի որդին և Հովհաննեսի եղբայրը: Նա թողեց տասնհինգամյա Գագիկ անունով մի տղա»[42]:

Գագիկի կրթության և պատրաստվածության մասին **Կիրակոս Գանձակեցին** հաղորդում է ուշագրավ տեղեկություն. «Բայց, որովհետև նա մանկությունից գրքերի ուսումնասիրությամբ էր զբաղված, նրանցով էլ զվարճանում էր»[43]: Մ. Աբեղյանը գրում է. «Անիի արքունիքում եղել է գրադարան. նույնը կար և կաթողիկոսարանում: Իբրև ուսումնասեր և գիտուն հիշվում է նաև Գագիկ Բ-ն»[44]:

1041 թ. մահանում է Հովհաննես-Սմբատը՝ գահը թողնելով անտեր, քանի որ անորդի էր: 1041-1042 թթ. անիշխանության շրջանում գահի համար պայքար էր մղում Վեստ Սարգիսը: Իսկ Վասիլ Բ կայսրը, այս միջոցը հարմար համարելով, Տրապիզոնի պայմանագրի համաձայն իրեն կտակված Անիին տիրելու նպատակով 100-հազարանոց զորք է ուղարկում Հայաստան: Սակայն անեցիները Վահրամ Պահլավունու գլխավորությամբ ջախջախում են բյուզանդական զորքին, փրկվում է մոտ հարյուր մարդ, որոնք Վահրամ Պահլավունու միջնորդությամբ ազատ են արձակվում: Այս դեպքերից հետո բյուզանդացիներն առժամանակ մոռանում են Անին իրենց անցնելու Տրապիզոնի պայմանագրի պահանջը:

Հենց այս օրերին էլ՝ 1042 թ., 18-ամյա Գագիկ Բ Բագրատունուն Անիում Պետրոս Գետադարձ կաթողիկոսի ձեռամբ հանդիսավորապես օծեցին հայոց թագավոր: Կ. Մաթևոսյանը գրում է, թե Գագիկ Բ Բագրատունու գլխին թագ է դրել Գրիգոր Բջնեցին. «Վահրամ Պահլավունին որպես զորավոր և տոհմա-

---

[42] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Հրաչ Բարթիկյանի**, Երևան, 1991, էջ 89:

[43] **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները **Վարագ Առաքելյանի**, Երևան, 1982, էջ 75:

[44] **Մ. Աբեղյան**, Երկեր, հտ. Դ, էջ 34:

պետ, իսկ ուսյալ Գրիգորը՝ գաղափարակիր և արարողական մասնակից, Գագիկին թագադրելով փորձում են կանխել Անիի Բագրատունյաց թագավորության անկումը»[45]:

**Գագիկ Բ Բագրատունու ժամանակակից Արիստակես Լաստիվերցին** Պատմության Ժ գլխում գրում է, որ Վահրամ Պահլավունին «հրավիրելով իրենց մոտ Աշոտի որդի Գագիկին՝ թագավորեցրին իրենց վրա և հնարամտորեն քաղաք բերին»[46]: Իսկ Մատթեոս Ուռհայեցին վկայում է. «Այն ժամանակ բարձրացավ Գագիկ անունով տասնութ տարեկան մի պատանի, Բագրատունիների տոհմից, Աշոտ արքայի որդին՝ Գագիկի որդին, Աշոտի որդին, Աբասի որդին, Սմբատի որդին, Երկաթի որդին: Պատանի Գագիկը շատ խոհեմ, երկյուղած և աստվածասեր էր: Հայոց բոլոր նախարարները, հավաքվելով տեր Պետրոս հայրապետի մոտ, սուրբ Հոգու շնորհիվ և ազգությամբ հայկազնյան, Պահլավունիների տոհմին պատկանող, իր նախահոր անունով Գրիգոր կոչվող և սուրբ Գրիգորի ազգից սերող մեծ իշխանի հրամանով [որ և օծեց նրան սրբակենցաղ մեծն Մարցեն], Գագիկին օծեցին համայն Հայաստանի թագավոր»[47]: Ուռհայեցին Գագիկին բնութագրում է որպես «շատ բարեպաշտ և աստվածասեր մի մարդու, իմաստասիրական շրջաններում անպարտելի»[48], որ «մեծ խոհեմությամբ ջանք էր թափում ամրապնդել Հայաստանի թագավորական գահը և խնդրում աստծուն, որ իրեն ու Բագրատունյաց տոհմին նեցուկ կանգնի»[49]: Քրիստոնյա պատմիչը հավատացած է, որ «Սուրբ Հոգու շնորհքով, հաջողությամբ անցան Գագիկի թագավորության երկու տարիները»[50]:

Արիստակես Լաստիվերցին հաղորդում է, որ Գագիկ Բ-ն կալանավորում է Վեստ Սարգիս իշխանին և տիրում նրա բերդերին[51], սակայն կարճ ժամանակ անց նրան ազատում է. «Բայց Գագիկը հետևողական չգտնվեց և ըստ երևույթին ճնշման տակ ոչ միայն ազատ արձակեց վեստ Սարգսին, այլ պատանեկան դյուրահավատությամբ հավատաց նրա երդումներին և վերականգ-

---

[45] **Կ. Մաթևոսյան**, Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, էջ 60:

[46] **Արիստակես Լաստիվերցի**, Պատմություն, թարգմանությունը **Վ. Ա. Գևորգյանի**, Երևան, 1971, էջ 32:

[47] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Հրաչ Բարթիկյանի**, էջ 97:

[48] Անդ:

[49] Անդ:

[50] Անդ:

[51] **Արիստակես Լաստիվերցի**, Պատմություն, թարգմանությունը **Վ. Ա. Գևորգյանի**, Երևան, 1971, էջ 32:

նեց նրան իր պաշտոնին: Օգտվելով դրանից, վեստ Սարգիսը շարունակեց իր կործանարար գործունեությունը»[52]:

1042 թ. Բյուզանդիայում գահ է բարձրանում Կոստանդին Մոնոմախը (մոտ 1000-1055), որի մոտ նենգաբար ներկայացավ Վեստ Սարգիսը՝ Անին Գագիկից խլելու ծրագրով: Ուռհայեցին վկայում է. «Այն ժամանակները անօրեն Սարգիսը սկսեց երևան բերել իր նենգությունը. նա խորհուրդ տվեց Մոնոմախին և ասաց. «Եթե բարեկամության պատրվակով քեզ մոտ՝ Կոստանդնուպոլիս հրավիրես Գագիկին, ապա խաբեությամբ դու կկարողանաս նրա ձեռքից խլել Անի քաղաքը»: Մոնոմախ կայսրը, լսելով այդ, շատ ուրախացավ. նրա սրտում ծլեց չարության հունդը՝ վերացնել հայոց թագավորությունը»[53]:

1044 թ. Մոնոմախը զորք է ուղարկում Անին գրավելու. «Անիի դարպասների առջև կրկին տեղի ունեցավ կատաղի ճակատամարտ, որտեղ հայերը սպարապետ Վահրամ Պահլավունու և Գագիկ Բ թագավորի գլխավորությամբ փայլուն հաղթանակ տարան ու փախուստի մատնեցին բյուզանդական զորքերին»[54]:

Եվ բյուզանդացիները, տեսնելով, որ զենքի ուժով չեն կարողանում տիրանալ Անիին, դիմում են նենգության: 1045 թ. Մոնոմախ կայսրը Բյուզանդիա է հրավիրում Գագիկ թագավորին: Թագավորը չի ցանկանում մեկնել, դրան հատկապես դեմ էր Վահրամ Պահլավունին: Սակայն Վեստ Սարգիսն ու Պետրոս Գետադարձը համոզում են թագավորին, հատկապես Պետրոս Գետադարձի միջնորդությամբ ու կայսեր սուտ երդումներին հավատալով՝ Գագիկ թագավորը մեկնում է Կոստանդնուպոլիս՝ «կարթով բռնված ձկան նման կամ ծուղակն ընկած մի թռչունի պես»[55]: Արիստակես Լաստիվերցին վկայում է, որ Գագիկն Անիի բանալիները մեկնելուց առաջ հանձնեց Պետրոս Գետադարձ կաթողիկոսին. «Երդումների ու խաչի, թե խակամտության ու երկյուղած բնավորության պատճառով, չգիտեմ, Գագիկը հավատաց և քաղաքի բանալիները տվեց Պետրոսին»[56]:

Ըստ Ուռհայեցու՝ Գագիկին մի քանի օր մեծարանքներով ու հյուրասիրությամբ պատվում են Մոնոմախ կայսեր մոտ: «Այն ժամանակ նենգ աստվածուրացները, ովքեր սոսկալի երդումը հաստատել էին աստծո արյամբ, Անի քաղաքի քառասուն բանալիները ուղարկեցին Մոնոմախ կայսեր, հետն էլ մի

---

[52] Հայ ժողովրդի պատմություն, հտ. III, Երևան, 1976, էջ 151:

[53] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Հրաչ Բարթիկյանի**, էջ 103:

[54] Հայ ժողովրդի պատմություն, հտ. III, Երևան, 1976, էջ 152:

[55] **Արիստակես Լաստիվերցի**, Պատմություն, թարգմանությունը **Վ. Ա. Գևորգյանի**, էջ 36:

[56] Անդ, էջ 35:

նամակ, թե Անի քաղաքը և ողջ Արևելքը քո սեփականությունը դարձան: Կայսրը կանչեց Գագիկին, նրա առջև դրեց քաղաքի բանալիներն ու նամակը և ասաց. «Անին և բովանդակ Արևելքը ինձ տվեցին»: Գագիկը հասկացավ չարանենգ գործի մասին, արտասվալից հառաչեց և ասաց. «Թող Քրիստոսը դատաստան տեսնի իմ և ինձ նենգողների նկատմամբ»: Գագիկն ասաց Մոնոմախին. «Հայոց երկրի տերն ու թագավորը ե՛ս եմ, ես քեզ չե՛մ տալիս Հայաստանը, որովհետև դու ինձ խաբեությամբ Կոստանդնուպոլիս բերեցիր»: Գագիկն այդպես անսասան մնաց երեսուն օր, բայց երբ տեսավ, որ ելք չի գտնում, Անին հոռոմոց հանձնեց»[57]: Արիստակես Լաստիվերցին հաղորդում է. «Իսկ Գագիկը անմխիթար մնաց թագավորի մոտ. սա մարդասիրությունից դրդված նրան տվեց իր կամեցած տեղը, որը արժեքով շատ ավելի ցածր էր Անուց ու մնացած երկրից. շնորհակալությունն ու վարձատրությունը կաթողիկոսին հատուցեցին, որից քաղաքն առան: Գագիկը թագավորի հրամանով իրեն կին առավ Սենեքերիմի որդի Դավթի դստերը և տեր դարձավ նրա բաժնին, որովհետև Դավիթը վախճանվել էր առանց այլ ժառանգ ունենալու»[58]: Իսկ Մ. Օրմանյանը գրում է, թե «կայսրն ոչ եւս խոստացած Մելիտինէն կու տար անոր, այլ կը ներէր միայն որ Սեբաստիոյ վախճանեալ թագաւորին՝ Դաւիթ Արծրունիի այրիին հետ ամուսնանալով, **տիրէ նորին բաժնին** (ԼԱՍ. 52), այսինքն այն բաժինին որ Դաւիթի իբրեւ վարձք տրուեցաւ Նիկեփորոս Ծռվիզը սպաննելուն համար»[59]: Ուռհայեցին ավելի հստակ գրում է. «Մոնոմախը դրա դիմաց Գագիկին տվեց Կալոն Պեղատը և Պիզուն, բայց նրան չթողեց գնալ Անի, այլ կարգադրեց, որ նրա ընտանիքը հոռոմոց երկիրը բերեն: Գագիկը մնաց պանդուխտ հունաց անողորմ և չար ժողովրդի մեջ»[60]:

Ինչպես տեսնում ենք, Գագիկի ամուսնության հարցի շուրջ կան հակասական տեղեկություններ: Ուռհայեցու վկայությամբ՝ նրա ընտանիքը Անիից բերվում է Բյուզանդիա, ըստ Լաստիվերցու՝ նա կայսեր պահանջով ամուսնացավ Սենեքերիմի որդի Դավթի դստեր հետ, իսկ Մ. Օրմանյանի կարծիքով՝ ամուսնացել է Դավթի այրու հետ՝ տեր կանգնելու նրա կալվածքին: Ավելին, Մ. Օրմանյանը հիշատակում է Վարդան Արևելցու մի վկայությունը, թե Մոնոմախ կայսեր մահից հետո վերջինիս քենի Թեոդորան իշխել է 2 տարի և այդ միջոցին առաջարկել է Գագիկ թագավորին ամուսնանալ իր հետ և

[57] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Հրաչ Բարթիկյանի**, էջ 105:

[58] **Արիստակես Լաստիվերցի**, Պատմություն, թարգմանությունը **Վ. Ա. Գևորգյանի**, էջ 36-37:

[59] **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, էջ 1434:

[60] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Հրաչ Բարթիկյանի**, էջ 105:

դառնալ կայսր. «Իսկ զտէրն Անւոյ զԳագիկ՝ որ չոգաւ ի Կոստանդնուպոլիս, շատ աղերսեալ Թոդորին քեռն Զոյի, զի լիցի հոռոմ և այր նմա և թագաւորէ Յունաց, և ոչ հաւանեցաւ»[61]: Սակայն Մ. Օրմանյանը հավանական չի համարում պատմիչի այս տեղեկությունը. «Կայսերական պատմութեան մէջ տարօրինակ կերպով մը, իր քենին Թէոդորա ուղղակի կայսերական իշխանութիւնը ձեռք առաւ, եւ պահեց երկու տարի մինչեւ իր մահը 1056-ին: Իբր թէ Թէոդորա թագուհին Գագիկ Աշոտեանին առաջարկած ըլլայ, զի **հոռոմ լիցի, եւ այր նմա, եւ թագաւորէ Յունաց,** եւ Գագիկ մերժած ըլլայ (ՎԱՐ. 105), ինչ որ մենք հաւանական չենք տեսներ»[62]:

Գագիկի կնոջ մահվան մասին մի մութ ակնարկ ունի Գրիգոր Մագիստրոսը՝ «Պատասխանի տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի սակս տնտնջելոյ զորդւոյն Աշոտի, մինչ կինն վաղճանեցաւ» Դ թղթում. «Այլ գրեալ էր քո, եթէ զկնի մահուան կնոջ իւրոյ առաւել կապեալ է ի սէր հաւր նորա»[63]:

Ուստի մեզ համար ընդունելի է Մ. Օրմանյանի տեսակետը երկրորդ անգամ ամուսնանալու մասին:

Գագիկի որդիների անունը ևս հայտնի է. «Գագիկ Աշոտեանի երկու որդիներն միայն կը յիշուին պատմութեան մէջ, կրտսերն Դաւիթ, Ապլղարիպի փեսան, նոյնիսկ իր աներէն թունաւորուելով սպաննուեցաւ Գագիկին դիմումէն ետքը: Իսկ երէց որդին Յովհաննէս, փեսայացած կ'ըսուի Անիի յոյն դուքսին, անկէ Կոստանդնուպոլիս եկած Աշոտ որդւոյն հետ, որ վերջէն նորէն Անի կը դառնայ. եւ Մանուչէի ներքինիներէն մին զայն կը թունաւորէ. Անիի վրայ իրաւունք ունեցողի մը կեանքը վերուցած ըլլալու համար: Յովհաննէս ալ մեռաւ Աշոտ որդիէն քիչ ետքը»[64]:

Անին 1045 թ. վերջնականապես հանձնվեց կայսերը, իսկ Գագիկ Բ-ն մնաց պանդխտության մեջ մինչև իր կյանքի վերջը: Գ. Մանուկյանն այս «ապաբախտ և հայրենակարոտ» արքայի մասին գրում է. «Գագիկ 2-րդին Անիի և շրջակա գավառների փոխարեն, ըստ օտար աղբյուրների, տվեցին մագիստրոսի կոչում, թոշակ, Կ. Պոլսում մի պալատ և հողեր Կապադովկիայի, Ղարսիանի, Լիկանտոնի և Կալոնպաղատի մեջ, ինչպես նաև Պիզու փոքր քաղաքը: Իսկ ըստ հայկական աղբյուրների՝ նրան տվեցին Խավարտանեքը, Պիզուն, Կալոնպաղատը, Կեսարիան, Ծամնդավը»[65]:

Հովհաննես Սկիլիցեսը գրում է. «Գագիկը մի կողմից պատերազմ մղելով

---

[61] Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, էջ 105-106:

[62] **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, էջ 1460:

[63] Մատենագիրք Հայոց, հտ. ԺԶ, էջ 267:

[64] **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, էջ 1521:

[65] **Արիստակես Լաստիվերցի**, Պատմություն, թարգմանությունը **Վ. Ա. Գևորգյանի**, էջ 131:

հռոմեական բանակի դեմ, մյուս կողմից ենթարկվելով Դվինի կառավարչի ասպատակություններին, կատարյալ հուսաբեկ եղած, պարակիմոմենոսի հետ հաշտություն է կնքում և նրա միջոցով հանձնվում կայսեր ու տալիս Անի քաղաքը: Գալով կայսեր մոտ, նա մագիստրոսի պատվաստիճան ստացավ, շատ եկամտաբեր շրջաններ Կապադովկիայում, Խարսիանոնում, Լիկանդոսում, և այսուհետև խաղաղ ու անվրդով կյանք ապրեց»[66]:

Հայտնի չէ որևէ տեղեկություն Գագիկ թագավորի՝ 1045-1065 թթ. ընթացքի մասին, սակայն Ուռհայեցին հայտնում է, որ Խաչիկ Բ Անեցի կաթողիկոսի (1058-1065) մահից հետո, երբ կաթողիկոս պիտի դառնար Գրիգոր Բ Վկայասերը (1066-1105), Բյուզանդիայի Կոստանդին ԺԱ Տուկիծ (1059-1067) կայսրը որոշում է ոչնչացնել սուրբ Գրիգոր Լուսավորչի դավանանքը՝ պարտադրելով հունադավանություն: Այս մասին վկայություն է պահպանվել նաև Սամվել Անեցու ժամանակագրության մեջ. «Դարձեալ յայսմ ամի եմուտ Գագիկ ի Կոստանդնուպոլիս ի ՇԺԴ (1065) թվին եւ եղեւ քննութիւն հաւատոյ եւ երեւեցաւ անդ ուղղափառութիւնս Հայոց ճշմարիտ, եւ փառաւորեցաւ Գագիկ ընդ այլ գիտնականսն Հայոց որք ընդ նմա էին վարդապետք եւ իշխանք յորժամ գնաց»[67]:

Հայոց իշխաններ Ատոմն ու Ապուսահլը, որ հրավիրված էին այս հավատաքննությանը, իրենց հետ բերել էին Հակոբ Սանահնեցի վարդապետին: Վերջինս որոշ հարցերում տեղի է տալիս բանավեճի ժամանակ, իսկ իշխանները թաքուն մարդ են ուղարկում Գագիկի մոտ, քանի որ, ինչպես Ուռհայեցին է վկայում, «Գագիկը իմաստասիրական հարցերում հզոր էր և բանավեճերի մեջ՝ անպարտելի»[68], իսկ Սմբատ Սպարապետի վկայությամբ՝ «զարգացեալ եւ վայելուչ եւ իմաստուն եւ հմուտ աստուածային ուսմանց»[69]:

Մ. Օրմանյանը նկատել է, որ այս հավատաքննությունը եղել է Խաչիկ Բ Անեցու մահից հետո և մինչև Գրիգոր Վկայասերի ընտրությունը[70]: Երբ կայսեր ներկայությամբ Հակոբ Սանահնեցին գրեց հայոց և հոռոմոց հավատի գիրը, որը շատ հավանեցին հոռոմները, և այն կայսեր հրամանով դրվեց Սուրբ

---

[66] Բյուզանդական աղբյուրներ, Գ, **Հովհաննես Սկիլիցես**, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ **Հրաչ Բարթիկյանի**, Երևան, 1979, էջ 148:

[67] **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ **Կարեն Մաթեւոսյանի**, էջ 191:

[68] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Հրաչ Բարթիկյանի**, էջ 175:

[69] Սմբատայ Սպարապետի՝ եղբոր Հեթմոյ Առաջնոյ արքայի Հայոց Պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպոլիս եւ Հայոց մեծաց ըստ կարգի ժամանակաց, Մոսկուա, 1856, էջ 57:

[70] Այս մասին տե՛ս **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, էջ 1479-1486:

Սոֆիայի տաճարում՝ որպես համերաշխության նշան: «Հենց այդ պահին, արծվի նման սլանալով, Կոստանդնուպոլիս հասավ Գագիկը, որի [գալստյան] լուրը կայսեր շատ ուրախացրեց: Երբ [Գագիկը] մտավ կայսեր մոտ, վերջինս հրամայեց բերել միության գիրը: Երբ Գագիկը կարդաց Հակոբոսի գրածը, հենց կայսեր ներկայությամբ պատռեց այն երկու մասի և գետին շպրտեց: Կայսրը, տեսնելով դա, շատ ամաչեց: Գագիկն ասաց կայսեր այդ վարդապետի մասին: «Նա կրոնավոր մարդ է, հայոց երկրում շատ-շատ են կրոնավորները, նրանք չեն ընդունի, և ոչ ոք էլ չի ենթարկվի սրա գրածին, մենք նրան հայոց իսկական վարդապետների թվին չենք դասում»: Նա կայսեր ներկայությամբ հանդիմանեց Հակոբոսին և ասաց. «Դու ինչպե՞ս հանդգնեցիր այդ բանն անել, դատարկաբանությամբ զբաղվել, չէ՞ որ կրոնավոր մարդ ես»: Գագիկն ասաց Տուկիծ կայսեր. «Ես թագավոր եմ, հայոց թագավորների զարմ, բոլոր հայերն իմ հրամաններին են ենթարկվում: Ես քաջագիտակ եմ աստծո Կտակարաններին, թե Հին և թե Նոր, բոլոր հայերը կհաստատեն իմ ասածը, քանզի ինձ դասում են վարդապետների շարքին: Ահա ես այսօր հոռոմների հետ խոսում եմ հայոց ազգի հավատքի մասին»: Եվ Գագիկը իր ձեռքով շարադրեց հետևյալ հավատո գիրը ու տվեց կայսեր և պատրիարքին»[71]:

Տուկիծ կայսրը և ճեմարանում ներկա գտնվող բոլոր իմաստասերները հավանեցին Գագիկի համոզիչ խոսքերը, ոչ մի վարդապետ չկարողացավ որևէ թերություն գտնել նրա հավատո գրի մեջ, որի շնորհիվ, ինչպես Մատթեոս Ուռհայեցին է գրում, «Գագիկի անունը փառավորվեց հայոց երկրում այն ժամանակ հանդես եկած այլ լուսավոր վարդապետների [անվան] հետ»[72], ի շարս որոնց՝ պատմիչը հիշատակում է Գրիգոր և Անանիա Նարեկացիների, Հովհաննես Կոզեռնի և ժամանակի այլ երևելի վարդապետների անունները:

Գագիկ թագավորի մասին մյուս արժանահիշատակ վկայությունը կապվում է Կեսարիայի Մարկոս մետրոպոլիտի հետ. «Մետրոպոլիտը համայն հունաց երկրում անուն էր հանել, նա մեծ էր և ահարկու, բայց նա շատ էր անարգում մեր հայ ազգը և բոլոր շներին Արմեն էր անվանում: Սա երբ իմացավ, որ կայսրը ուզում է հոռոմ մկրտել [հայոց] թագավորազուններին, աննկարագրելի փորձանք բերեց հայոց գլխին: Գագիկը որտեղ որ իջևաներ, հայոց բոլոր զինվորներին հրաման էր տալիս խայտառակել հոռոմոց երևելի կանանց: Նա նրանց անարգում էր, քանզի որոշել էր այլևս ոտք չդնել Կոստանդնուպոլիս, այլ գնալ պարսից սուլթան Աբասլանի մոտ և տիրանալ

[71] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Հրաչ Բարթիկյանի**, էջ 175:

[72] Անդ, էջ 195:

հայոց երկրի թագավորական գահին»[73]: **Այստեղ առավել ուշագրավ է այն, որ Գագիկը մտադրություն է ունեցել անցնել պարսից կողմը և վերականգնել հայոց թագավորությունը պարսիկների օժանդակությամբ, որով բացահայտվում են պետական-քաղաքական գործչի՝ պետականության վերականգնման ձգտումները**: Մինչդեռ Գագիկի այս օրերի ընթացքի մասին Մ. Օրմանյանը գրում է. «Գագիկ իր ցասումը կը յայտնէր աջ ու ձախ Յոյները նախատելով եւ անոնց կիները խոշտանգելով»[74]:

Իսկ հայատյաց Մարկոս մետրոպոլիտին վերջինիս կողմից Արմեն անվանված շան հետ Գագիկ թագավորը գցել է տվել մի պարկի մեջ, և շանը զարկելով՝ գազազեցրել են, իսկ այդ շունն էլ սպանել է Մարկոսին:

Գագիկի՝ հույների հանդեպ համարձակ ու հանդուգն վարքագիծը չէր կարող անհետևանք մնալ, և այն պատճառ դարձավ վրեժխնդրության:

Գագիկ թագավորի սպանության մասին պահպանվել են մատենագրական ստույգ տեղեկություններ: Մատթեոս Ուռհայեցին Գագիկի սպանության թվականը համարել է 1079 թ., մինչդեռ ըստ Սամվել Անեցու ժամանակագրության՝ 1080 թ. «թագաւորն Հայոց Գագիկ գնաց ի Տարսոն քաղաք եւ դարձեալ եկն Ռ (1000) արամբք ի դաշտն Առճեասայ ի բերդն Կիզիստռոյ եւ անդ սպանաւ յաստուածուրաց Հոռոմոցն»[75]:

Հայագիտության մեջ առաջարկվել են արքայի սպանության թվականի այլ տարբերակներ[76]:

Ըստ Ուռհայեցու՝ Գագիկը Պիզուից Տարսոն է գնում իր խնամի Ապլղարիբին հյուր. Գագիկի որդի Դավիթն ամուսնացած էր Ապլղարիբի դստեր հետ. «Խնամիներուն մէջ տեղի ունեցած գժտութեան մը հետեւանօք, Ապլղարիպ ոխացած էր փեսային հետ եւ զայն բանտարկած: Գագիկ Տարսոն գնաց, գործը կարգադրել եւ **հանել զնա** բանտէն»[77]:

Ուռհայեցին հաղորդում է. «Գագիկը բարեկամական նպատակներով գնացել էր Ապլղարիպի մոտ (վերջինս Գագիկին կանչել էր խնամության նպատակով): Բայց ինչ-ինչ պատճառներով խնամության գործը գլուխ չեկավ, և

[73] Անդ, էջ 195-197:

[74] **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, էջ 1512:

[75] **Սամուէլ Անեցի եւ շարունակողներ**, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ **Կարեն Մաթեւոսյանի**, էջ 196:

[76] Տե՛ս **Ն. Ադոնց**, Դալասենոսներ, Երկեր, հ. Ե, «Հայ-բյուզանդական ուսումնասիրություններ», Երևան, 2012, էջ 471-484, նաև **G. Dédéyan**, Les Arméniens entre Grecs, Musulmans et Croises, Etude sur les pouvoirs Arméniens dans le Proche–Orient Mediterraneen (1068–1150), vol. 1, Aux origines de l'Etat Cilicien: Philarete et les premiers Roubeniens, Lisbonne, 2003, էջ 290–296).

[77] **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, էջ 1519:

Գագիկը առյուծի պես մռնչալով վերադարձավ: Նա մեծ, հզոր և քաջ մարդ էր: Նա ձերբակալեց գավառի բոլոր իշխաններին և շղթայակապ իր առջևից էր քշում»[78]: Ըստ Ուռհայեցու վկայության՝ Գագիկը գալիս է Արժախասի դաշտը՝ Կիզիստրա կոչվող բերդը, որը հոռոմ Մանդալեի երեք որդիներինն էր: Երեք իշխան եղբայրները երկրպագեցին Գագիկին, իսկ երբ Գագիկը ողջագուրվում էր նրանց հետ, եղբայրները բռնեցին Գագիկի վզից և ձիուց ցած գլորեցին, բռնեցին ու տարան բերդ: Ութ օր անց Գագիկ Աբասյանը Ատոմ ու Ապուսահլ իշխանների հետ պաշարեց բերդը՝ պահանջելով ազատել Գագիկ թագավորին, սակայն անառիկ բերդը չկարողացան գրավել: «Այն ժամանակ աստվածա-սպան հոռոմները աղեղի լարով խեղդամահ արեցին հայոց թագավորին և նրա դիակը մեկ օր պարսպից կախած թողեցին, որից հետո հանեցին և բերդից դուրս թաղեցին: Վեց ամիս անց [Գագիկի] քաղաքից Բանիկ անունով մի մարդ եկավ, որը Գագիկ թագավորի մարմինը գիշերով, գաղտնաբար հանեց և տարավ նրա քաղաքը, ազգականների մոտ: Ողջ հայ ժողովուրդը մեծապես ողբաց նրան: [Գագիկին] թաղեցին իր Պիզու վանքում»[79]:

Մ. Օրմանյանը բարձր է գնահատել Գագիկ թագավորի քաջությունը, որն էլ փաստորեն դարձել է նրա սպանության պատճառը. «Որչափ ատեն որ ապրեցաւ Գագիկ, ահ ու սարսափ դարձաւ իր շրջանակներուն, եւ միայն իր բուռն զօրութեան եւ կատաղի քաջության շնորհիւ կրցաւ անկախ ապրիլ յունական սահմաններուն մէջ, մինչեւ որ Յոյներու վրէժխնդիր թշնամութեամբ սպաննուեցաւ»[80]:

Գագիկ Բագրատունու անունը հիշատակվում է հայ մատենագրության մեջ այլ առիթով ևս. Կիլիկյան հայոց թագավորության հիմնադիր Ռուբենը Գագիկ Բ թագավորի զինվորներից էր, ինչը վկայում են Մատթեոս Ուռհայեցին[81] և Սմբատ Սպարապետը[82], ում մասին Մ. Զուլալյանը գրում է. «Հավանականն այն է, որ Ռուբինյան իշխանության հիմնադիր Ռուբենը եղել է Գագիկ Բ-ի թիկնապահ իշխաններից, թերևս Կիլիկիայի հյուսիսային լեռնաշխարհում՝

---

[78] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Հրաչ Բարթիկյանի**, էջ 235-237:

[79] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Հրաչ Բարթիկյանի**, էջ 237:

[80] **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, էջ 1513:

[81] Այս մասին տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Հրաչ Բարթիկյանի**, էջ 291, 351:

[82] Տե՛ս **Սմբատայ Սպարապետի**՝ եղբոր Հեթմոյ Առաջնոյ արքայի Հայոց Պատմութիւն Յունաց ի Կոստանդնուպոլիս եւ Հայոց մեծաց ըստ կարգի ժամանակաց, Մոսկուա, 1856, էջ 77:

Բարձրբերդում հաստատված ազգականներից մեկը»[83]: **Կարելի է ենթադրել, որ կորուսյալ պետականության վերականգնման գաղափարը Ռուբեն իշխանի մեջ դաստիարակել էր հենց Գագիկ Բ թագավորը:**

**Գագիկ թագավորի միակ ստեղծագործությունը՝ «Հավատոյ գիր»**-ը, մեզ է հասել Մատթեոս Ուռհայեցու ժամանակագրության մեջ[84]:

Գ. Զարբհանալյանը «Մանր մատենագիրք» վերնագրով հավելվածում հիշատակում է Գագիկ Բ Բագրատունուն՝ որպես մատենագրի, սակայն այդ հատվածում Գագիկ Բ Բագրատունու հավատի գրի փոխարեն հիշատակում է Գագիկ Արծրունու թղթի մասին. «Հասած է առ մեզ թուղթ մը «Գագկայ Վասպուրականի թագաւորի առ կայսր Յունաց Ռոմանոս վասն հաւատոյ»»[85]:

Հարկ է շեշտել, որ Վասպուրականի Գագիկ Արծրունու (Ժ. դար) Թուղթը[86] չի կարելի շփոթել Գագիկ Բ Բագրատունու (ԺԱ. դար) Հավատի գրի հետ[87]: Առաջինը մեզ է հասել «Գիրք թղթոց» ժողովածուի մեջ և ուղղված է Հունաց Ռոմանոս Ա Լեկապենոս կայսերը (920-944), իսկ երկրորդը զետեղվել է Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» մեջ և Կոստանդին ԺԱ Տուկիծ (1059-1067) կայսեր ժամանակ կատարված հավատաքննության առիթով է գրվել:

Հայագիտության մեջ ավելի ուշ զանազանվել են հավատի այս երկու գրերը. «Գագիկ Արծրունի և Գագիկ Բագրատունի թագավորներու հավատո գիրերը՝ հայ մատենագրության արժեքավոր նշխարներ են, որոնք շահեկանություն կներկայացնեն թե՛ միջեկեղեցական և թե՛ քաղաքական տեսակետե»[88]:

1065 թ. տեղի ունեցած հավատաքննության ժամանակ, ինչպես վերևում նշեցինք, Գագիկ թագավորը գալիս պատռում է Հակոբ Սանահնեցու հավատո գիրը և դիմում է Տուկիծ արքային. «Տե՛ր արքա, քո խնդիրքի առթիվ մեզ հարկ եղավ անդրադառնալ հայոց դավանանքին: Արդ, դու ուշադիր լսիր ճշմարիտ հավատի մասին իմ խոսքը, իմացիր հայոց դավանանքի ճշմարիտ խոստովանությունը»[89]:

---

[83] Հայ ժողովրդի պատմություն, հտ. III, Երևան, 1976, էջ 677:

[84] Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Հրաչ Բարթիկյանի**, էջ 175-193:

[85] **Գ. Զարբհանալեան**, Հայկական հին դպրութեան պատմութիւն, էջ 778:

[86] Տե՛ս Մատենագիրք Հայոց, հտ. Ժ, Ե., 2011, էջ 795-799:

[87] Տե՛ս Մատենագիրք Հայոց, հտ. ԺԶ, Ե., 2012, էջ 665-672:

[88] **Մ. Գրիգորյան**, Գագիկ Արծրունի և Գագիկ Բագրատունի թագավորների թղթերը բյուզանդական արքունիքին, տե՛ս Պատմա-բանասիրական հանդես, 1989, թիվ 3, էջ 94:

[89] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Հրաչ Բարթիկյանի**, էջ 175-177:

Ինչպես իրավացիորեն գրում է Մ. Գրիգորյանը, Հակոբ Սանահնեցու (Քարափեցու) թուղթը մեզ չի հասել, որ «կարենայինք արդար դատաստան մը կատարել»[90]:

Գագիկ Բագրատունու հավատի գիրը կառուցված է հռետորական դիմումի ճարտասանական հնարքով, Գագիկ թագավորն իր հավատի ու դավանության խոսքը հաճախ է ընդմիջում կայսերն ուղղված դիմումով, ինչպես՝ «Ո՛վ բարեհաղթ կայսր»[91], «Ո՛վ ազնվազարմդ, մենք ուզում ենք հայտնել քո մեծությանը»[92], «Արդ, լսի՛ր, ով արքա»[93] և այլն:

Երբեմն էլ հեղինակը ուղենշում կամ գնահատում է իր խոսքը. «Այստեղ ես կամենում եմ խոսել նաև սուրբ Հոգու մասին»[94], «Այս ասում եմ, որպեսզի միտքս քեզ պարզ դառնա»[95], «Բազմաթիվ բացատրություններ կան, որ ավելորդ համարեցի այստեղ գրի առնել և մարդկանց ձանձրացնել»[96] և այլն:

Գագիկ թագավորը ոչ միայն հավատի իր խոսքը բանավոր է ներկայացրել, այլև «Բագրատունյաց վերջին և դժբախտ թագավորը ինք անձամբ կգրե հավատո թուղթ մը և զայն կհանձնե Կոստանդին կայսեր և Հովհաննես Ը պատրիարքին (1064-75)»[97]: Ընդունելի է Հ. Քյոսեյանի տեսակետը, թե «հայոց դավանանքը տեղում բանաւոր ներկայացնելուց յետոյ, Գագիկ Բագրատունին այնուհետեւ շարադրում է հաւատոյ գիրը»[98]:

Մ. Օրմանյանը «Գագիկի վարդապետականը» ենթավերնագրով հատվածում քննել է Գագիկ թագավորի մեզ հասած միակ երկը. «Գիրը ուղղուած է կայսեր հասցէին, եւ առաջ կը խօսի Երրորդութեան, արարչութեան եւ Հոգւոյն Սրբոյ վրայ, եւ մարդեղութեան վրայ խօսած ատենը կը յիշէ եւ կը հերքէ Վաղինտիանոսի, Մարկիոնի, Մոնտանոսի, Մանիի, Նավատիոսի, Սաբելիոսի, Արիոսի, Վոտինոսի, Նեստորիոսի, Եւտիքէսի, Հայ Սարգիսի, Պօղոս Սամոսատցիի, եւ Պետրոս Կնափեցիի վարդապետութիւնները»[99]:

---

[90] **Մ. Գրիգորյան**, Գագիկ Արծրունի և Գագիկ Բագրատունի թագավորների թղթերը բյուզանդական արքունիքին, տե՛ս Պատմա-բանասիրական հանդես, 1989, թիվ 3, էջ 98:

[91] **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները **Հրաչ Բարթիկյանի**, էջ 177:

[92] Անդ, էջ 179:

[93] Անդ:

[94] Անդ, էջ 177:

[95] Անդ, էջ 185:

[96] Անդ, էջ 193:

[97] **Մ. Գրիգորյան**, Գագիկ Արծրունի և Գագիկ Բագրատունի թագավորների թղթերը բյուզանդական արքունիքին, տե՛ս Պատմա-բանասիրական հանդես, 1989, թիվ 3, էջ 98:

[98] **Յ. Քէոսէեան**, Գագիկ Բագրատունու Հաւատոյ գիրը, տե՛ս Մատենագիրք Հայոց, հտ. ԺԶ, Ե., 2012, էջ 664:

[99] **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հտ. Ա, էջ 1484:

Գագիկ Բագրատունու հավատի գիրն ունեցավ ճակատագրական նշանակություն հայոց եկեղեցու համար. Խաչիկ Բ Անեցու մահից (1065 թ.) հետո Բյուզանդիայի կայսրն արգելել էր նոր կաթողիկոսի ընտրությունը՝ պարտադրելով հունադավանություն: Գագիկ թագավորի հավատի գրի շնորհիվ արտոնվեց կաթողիկոսի ընտրությունը, և 1066 թ. գարնանը կաթողիկոս ընտրվեց Գրիգոր Վկայասերը (1066-1105): Գագիկ թագավորի այս քայլը Մ. Գրիգորյանը գնահատում է որպես հայ եկեղեցու անկախության երաշխիք. «Այն որ քաղաքական մարզի մեջ խաբվեր էր բյուզանդացիներեն և արքայական գահը կորսնցուցած, ոգի ի բռին ջանաց պաշտպանել հայոց հոգևոր-եկեղեցական անկախությունը»[100]:

**Ամփոփենք՝ Գագիկ Բ Բագրատունին՝ Անիի Բագրատունյաց հայոց թագավորության վերջին արքան, ոչ միայն պետական-քաղաքական գործիչ է, որ պայքարել է կործանման եզրին կանգնած պետականության պահպանման համար և նախապատրաստել Կիլիկյան հայոց թագավորության սկզբնավորումը, միաժամանակ հոգևոր-մշակութային գործիչ է, որ իր «Հավատոյ գիր» երկով պաշտպանել է հայոց եկեղեցու դավանանքը՝ ընդդեմ հունադավանության, ավելին՝ այդ գրով արտոնել է հայոց կաթողիկոսի արգելված ընտրությունը՝ ձեռք բերելով պատմական նշանակություն: Գագիկ արքայի միակ երկն ունի դավանաբանական արժեք և հորինված է ճարտասանական հնարքներով:**

[100] **Մ. Գրիգորյան**, Գագիկ Արծրունի և Գագիկ Բագրատունի թագավորների թղթերը բյուզանդական արքունիքին, տե՛ս Պատմա-բանասիրական հանդես, 1989, թիվ 3, էջ 100:

**Вано Егиазарян**

## ГАГИК II БАГРАТУНИ И ЕГО «ПИСЬМО ВЕРЫ»

**Резюме**

***Ключевые слова:*** *Анийское царство Багратидов, армянский царь, вероучительное письмо, учение Армянской церкви, теологическое значение*

Гагик II Багратуни – последний царь из династии армянских Багратидов в Ани – был не только государственным и политическим деятелем, который боролся за сохранение стоящей на грани исчезновения государственности, подготовившим становление Киликийского Армянского Царства, но и был духовным и культурным деятелем, который своим трудом «Письмо Веры» защищал взгляды Армянской церкви против ереси жидовствующих, даже больше – этим письмом он дал разрешение на избрание Армянского католикоса, которое ранее было запрещено, чем приобрел историческое значение. Единственное произведение царя Гагика имеет теологическое значение и составлено с помощью соответствующих риторических приемов.

**Vano Yeghiazaryan**

## GAGIK BAGRATUNI AND HIS “FAITH OF THE SCRIPTURE”

**Summary**

***Key words:*** *the Bagratuni Kingdom of Ani, the King of Armenia, Faith of the Scripture, the Armenian church religion, religious value*

Gagik B Bagratuni, the last king of the Armenian Bagratuni Kingdom of Ani, was not only a distinguished state-political figure, who struggled for the statehood preservation (the state was on the verge) preparing the beginning of the Armenian Kingdom of Cilicia, but also a spiritual-cultural figure who protected the Armenian religion with the help of his “Faith of Scripture” against the Hellenic belief. And what is more, he privileged the forbidden election of the Armenian Catholicos which was really of historical value. The only writing of KingGagik was of religious value composed of oratorical devices.